ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցը՝ նրբանցքներով, անվանափոխել հայ կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Վլադիլեն Բալյանի անվամբ՝ «Վլադիլեն Բալյան փողոց» (սկսվում է Աբելյան փողոցից, հասնում՝ Բեկնազարյան-Մելքումովի փողոցների խաչմերուկ), «Վլադիլեն Բալյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է հ.7 և հ.9 շենքերի մոտից, հասնում Երևանի հ. 102 հիմնական դպրոց), «Վլադիլեն Բալյան փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է հ.11 և հ.13 շենքերի մոտից, հասնում՝ Բաշինջաղյան փողոցի փակուղի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվում է **Վլադիլեն Բալյանի անվամբ** անվանափոխել Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցը՝ հավերժացնելով հայ մեծանուն կոմպոզիտորի, Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի, Երևանի և Գյումրու պատվավոր քաղաքացու հիշատակը և նրա նշանակալի ավանդը հայ ազգային երաժշտարվեստի ու Հայաստանի մշակութային կյանքի զարգացման գործում:

Վլադիլեն Բալյանը ծնվել է Երևանում՝ 1924 թվականի ապրիլի 25-ին: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի խմբավարական և ստեղծագործական բաժինները: Իր երկարամյա գործունեությամբ նա նշանակալի ներդրում է ունեցել հայ երաժշտարվեստի զարգացման, ազգային երաժշտական ժառանգության պահպանման և տարածման, ինչպես նաև Հայաստանի մշակութային կյանքի կազմակերպման գործում:

Բալյանը ղեկավարել է Հայաստանի ռադիոյի երաժշտական հաղորդումները, Երևանի պարարվեստի ուսումնարանը և Հայաստանի պետական ֆիլհարմոնիան: 1966 թվականին նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանը, որը կարևոր դեր է ունեցել հայ դասական երաժշտության ժառանգության պահպանման գործում: 1965 թվականին նա կազմակերպել է Երևանում Բենջամին Բրիտտենի փառատոնը՝ միջազգային ճանաչում ունեցող երաժիշտների մասնակցությամբ՝ նպաստելով մայրաքաղաքի միջազգային մշակութային կապերի զարգացմանը:

Վլադիլեն Բալյանի վաստակը ճանաչվել է պետական և հանրային մակարդակներում: Նա արժանացել է Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կոչման և «Մովսես Խորենացի» մեդալի: 2020 թվականին Երևանի ավագանու որոշմամբ նրան շնորհվել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումը՝ երաժշտարվեստի բնագավառում ունեցած վաստակի, Երևանի մշակութային զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի և հայկական մշակույթի զարգացմանն ուղղված գործունեության համար:

Վլադիլեն Բալյանի անվամբ փողոցի անվանափոխումը կարևոր նշանակություն ունի Երևանի պատմամշակութային հիշողության պահպանման և ազգային մշակույթի ականավոր ներկայացուցիչների վաստակի հավերժացման տեսանկյունից: Նրա կենսագրությունը, ստեղծագործական ժառանգությունն ու հասարակական գործունեությունն անմիջականորեն կապված են Հայաստանի, հայ ժողովրդի և Երևանի հետ: Նա ոչ միայն հայ երաժշտարվեստի նշանավոր ներկայացուցիչ էր, այլև իր

գործունեությամբ մասնակցել է մայրաքաղաքի մշակութային կյանքի ձևավորմանն ու զարգացմանը:

Յուլիոս Ֆուչիկը չեխ գրող, լրագրող և գրական քննադատ էր, Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության անդամ՝ 1921 թվականից : Նրա անունը խորհրդային ժամանակաշրջանում տրվել է տարբեր քաղաքների փողոցների և հանրային տարածքների: Ներկայումս նույնիսկ իր հայրենիքում՝ Չեխիայում, ինչպես նաև Սլովակիայում անվանափոխվել են նրա անվան փողոցները, մասնավորապես այս երկու երկրների մայրաքաղաքներում, Պրահայում Ֆուչիկովա (Fučíkova) փողոցը վերանվանվել է Կոլբենովա (Kolbenova), իսկ Բրատիսլավայում՝ Մեդենա (Medená): Չեխիայի մյուս քաղաքներում ևս այսպիսի անվանափոխումներ են տեղի ունեցել, որոնցից Օստրավա քաղաքում՝ Ֆուչիկովա (Fučíkova) փողոցը վերանվանվել է Պոռուբսկա (Porubská), Ուստի նադ Լաբեմում՝ Մասարիկովա (Masarykova), Հոստիվիցեում՝ Չեսկա (Česká), իսկ Սլովակիայի Միխալովցե քաղաքում՝ Շտեֆանիկովա (Štefániková):

Յուլիոս Ֆուչիկի կենսագրության մեջ չի արձանագրվում Երևանի, երևանցիների, Հայաստանի կամ հայ ժողովրդի հետ անմիջական պատմական կապ, մինչդեռ **Վլադիլեն Բալյանի անվամբ փողոցի անվանափոխումը կլինի հայ ազգային մշակույթի նկատմամբ հարգանքի, մայրաքաղաքի պատմամշակութային հիշողության պահպանման և Երևանի հետ անմիջականորեն կապված ականավոր գործչի վաստակի հավերժացման կարևոր քայլ:**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 16-րդ կետն առաջարկվում Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցը՝ նրբանցքներով, անվանափոխել հայ կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Վլադիլեն Բալյանի անվամբ՝ «Վլադիլեն Բալյան փողոց» (սկսվում է Աբելյան փողոցից, հասնում՝ Բեկնազարյան-Մելքումովի փողոցների խաչմերուկ), «Վլադիլեն Բալյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է հ.7 և հ.9 շենքերի մոտից, հասնում Երևանի հ. 102 հիմնական դպրոց), «Վլադիլեն Բալյան փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է հ.11 և հ.13 շենքերի մոտից, հասնում՝ Բաշինջաղյան փողոցի փակուղի):

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ